



## «Քիմիան Հայաստանում» հայ-ռուսական գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հիմնադրման 15-ամյակին

Սույն թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Քիմիան Հայաստանում» հայ-ռուսական գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հիմնադրման 15-ամյակին:

Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի և Ռուսաստանի առաջատար գիտնականներ, այդ թվում՝ անվանի քիմիկոս, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Նիկոլայ Ջելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտի մետաղակոմպլեքս և մանոչափ կատալիզատորների լաբորատորիայի ղեկավար Վալենտին Անանիկովը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին: «Այսօր առավել քան երբևէ պահանջվում է համագործակցությունը մեր երկրների գիտնականների միջև: ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը հիմնադրվել է 15 տարի առաջ ակադեմիայի երկու խոշոր ինստիտուտների հզոր բազայի վրա՝ օրգանական քիմիայի և մուլթ օրգանական քիմիայի: Ներկայումս կենտրոնն ապրում է բարդ ժամանակներ, կենտրոնի ենթակառուցվածքները գտնվում են հարևան ընկերությունների ճնշման տակ: Կենտրոնի անձնակազմը համառոտ կանգնած է, և հույս ունեցե՛ք, որ ամեն ինչ լավ կլինի: Այդ կենտրոնը մեր ակադեմիայի կարևորագույն օղակներից մեկն է, և այն մեծ ներդրում ունի տալու մեր տնտեսությանը», - ասաց նա:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև Վալենտին Անանիկովը և ասաց. «Մենք շատ հպարտ ենք, որ Աշոտ Սերոբովիչն այս տարի ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Ռուս գիտնականների համար դա մեծ պատիվ է, որ աշխարհի բոլոր երկրների կողմից ճանաչված առաջատար գիտնականները միանում են և վերակենդանացնում այն ավանդույթը, որը մենք ունենինք:

Մեր գիտնականների միջև միշտ եղել են սերտ կապեր, և դա մեր համատեղ ձեռքբերումն է: Մենք հիմա մոտովի ենք արժևորում մեր գիտական դպրոցների կապերը: Մեզ պետք են նպատակային ծրագրեր՝ գիտնականների փոխանակում, վերապատրաստում, նպատակային ասպիրանտուրա: Նման ծրագրեր անպայման կիրառվեն, մենք մեր կողմից կներդնենք առավելագույն ջանքեր: Առաջիկա օրերին Հայաստանում են և ուրախ կլինեն ստանալ համագործակցության առաջարկներ տեղի գիտնականներից»:

Գիտաժողովին պլենար զեկուցմամբ հանդես եկան ՌԳԱ թղթակից անդամ Ալեքսանդր Տերենտևը՝ «Օրգանական պերօքսիդներ. ստացման և գործնական կիրառման եղանակները» թեմայով և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գևորգ Դանազուլյանը՝ «Կենսաբանորեն ակտիվ համակարգերի ոչ պարզունակ սինթեզ՝ նուկլեոֆիլների և ազիդների պարզունակ փոխազդեցությամբ» թեմայով: Ներկայացվեցին նաև գիտական զեկուցումներ «Նոր տեխնոլոգիաների ֆիզիկաքիմիական հիմունքները» թեմայի վերաբերյալ:

Գիտաժողովը աշխատանքը շարունակեց հոկտեմբերի 25-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում, որտեղ ներկայացվեցին գիտական զեկուցումներ «Ժամանակակից քվային տեխնոլոգիաներ կենսաբանության, բժշկության և քիմիայի մեջ» և «Հետերոցիկլիկ քիմիա և դեղամիջոցների ձևավորում» թեմաներով:

Հոկտեմբերի 26-ին գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում: Այստեղ ներկայացվեցին «Օրգանական սինթեզ ու արդիական կիրառություններ» և «Սուպրամոլեկուլային քիմիա և բժշկական քիմիա» թեմաներին նվիրված գիտական զեկուցումներ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Գիտական մտավորականության կոչ-դիմումը Հայաստանի և Արցախի Հանրապետությունների շուրջ ստեղծված իրավիճակի կապակցությամբ

Հայ ժողովրդի հինգհազարամյա պատմության ընթացքում պատմական Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջան իր ուրույն տեղն ու դերն է ունեցել: Որոշ պատմական փուլերում, հատկապես համահայկական պետականության բացակայության շրջանում, Հայաստանի առանձին նահանգներ, անգամ գավառներ ու լեռնային համայնքներ իրենց վրա են վերցրել գոնե երկրի մեկ հատվածում մեր ժողովրդի ինքնիշխան ապրելու այնքան անհրաժեշտ գործառնություն: Ավելին, երբեմն այդօրինակ պետական կազմավորումները՝ իբրև ինքնատիպ հեմայություններ, լուրջ նախադրյալներ են ստեղծել համահայկական պետականության վերականգնման ու ամրապնդման համար:

Արևելյան Հայաստանում հայոց պետականությունը շարունակաբար պահպանած երկրամասերի մեջ, անտարակույս, առանձնանում են Արցախն ու Սյունիքը: Պատահական չէ, որ 428 թ.՝ Արշակունիների թագավորության անկումից և 5-րդ դարի ազատագրական ապստամբություններից անմիջապես հետո, 485 թ. Արցախում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ կազմավորվել է հայկական ինքնուրույն թագավորություն, որի հիմքի վրա հետագայում ձևավորվել են պետական այլ կազմավորումներ Առաջափնյաի, Դուփյանների, Հասան-Ջալալյանների ջանքերով, ուշ միջնադարում Արցախ-Սյունիքի մելիքությունները դարձել են ազատագրական պայքարի կենտրոններ՝ ապահովելով հայոց պետականության անընդհատականությունը:

1918 թ.՝ հայոց պետականության վերականգնումից հետո, Արցախը մոռացված չէր թողնում իր անկախությունը, իսկ 1920 թ. ապրիլին՝ դեռ յուրե միանալ Հայաստանի Հանրապետությանը:

1921 թ. Արցախն արհեստականորեն ստեղծված Ադրբեջանին ապօրինի բռնակցելուց հետո խորհրդային իշխանությունները հարկադրված են եղել վերապահել պետական կազմավորման՝ ինքնավար մարզի կարգավիճակ, ինչի արդյունքում տեղի հայությունը, ի տարբերություն Նախիջևանի ինքնավար Հանրապետության, կարողացել է ամասելի դժվարությամբ պահպանել իր հարաբերական ինքնիշխանությունը: 1991 թ. դեկտեմբերի 10-ին, այդ

փուլում իրավական ուժ ունեցող խորհրդային օրենսդրությանը խիստ համապատասխան, համաժողովրդական հանրապետի արդյունքներով ամրագրվել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) անկախությունը, որը պահպանվել է մինչ օրս՝ Հայաստանի և համայն հայության հերոսական ջանքերի շնորհիվ:

2020 թ. Թուրքիայի և օտարերկրյա մեծաքանակ վարձկան ահաբեկիչների անմիջական մասնակցությամբ, միջազգային հանրության թողտվությամբ, Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի, ինչպես նաև Հայաստանի և Արցախի իշխանությունների առնվազն անհամարժեք գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը բռնազավթված է, իսկ պետականությունը՝ լրջագույնս վտանգված: Այս իրավիճակում ակնհայտ է, որ ապագայում անհնարին է Հայաստանի Հանրապետության գոյատևումն առանց նրա արևելյան հզոր դարպաս Արցախի, սին հույսեր փայփայելով, որ այդպիսի զիջողական քաղաքականությունը կպայմանավորի Հայաստանի փրկությունը:

Այս բխստորոշ ժամին հայ մտավորականությունն անասան կանգնած է հայկական երկու պետականությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի կողքին, պատրաստ է իր ողջ ներուժն ի սպաս դնելու ազգի միասնականության, հայրենիքի անվտանգության ու անկախության գործին, նպաստելու նրա ամրապնդմանն ու հետագա զարգացմանը՝ վասն հայության իրատեսական ապագայի:

Ադրբեջանի ծավալապաշտական քաղաքականության ու ագրեսիվ հռետորաբանության պարագայում **պահանջում ենք Հայաստանի Հանրապետության իշխանություններից չտարվել անհեռաչափ, խիստ վտանգավոր և ոչնչով չերաշխավորված պայմանավորվածություններով, կոչ ենք անում քաղաքական ու հասարակական կազմակերպություններին, աշխարհասփյուռ հայությանը գորավիզ լինել արցախցիների ինքնորոշման իրավունքի իրացմանը, գործադրել իրավական, քաղաքական և հասարակական առավելագույն ջանքեր, այդ թվում՝ միջազգային հարթակներում՝ պահպանելու Արցախի Հանրապետության անկախությունը:**



Եղիշե ԶԱՐԵՆՑ

## ՊԱՏԳԱՄ

Նոր լույս ծագեց աշխարհին.  
Ո՞վ այդ արևը բերեց:-  
Ահա ոսկյա մի արև՝  
ճառագունով իր իրե՝  
Այգաբացի պուրպուրե  
Նժույգների վրա հեց՝  
Նոր աշխարհին ու մարդուն  
Հղում է լույս գվարթուն:  
Նոր աշխարհին ու մարդուն  
Ո՞վ բերեց լույսն այս արթուն,

Օ՛, ո՞ւմ ծնեքով վառվեց, ո՞ւմ  
Հրակարմիր, հրավարս.  
Աղամանդա լույսը այս:-  
Կքած կյանքի բեռի տակ,  
Խոր գերության ընդերքում,  
Իմաստության մի գետակ  
Հիմարության համերգում-  
Քանի՜ տարի, քանի՜ դար  
Վկայեցիք անհերքում...  
Ափերին այն խավարչտին

Ուր հայրենիքն էր մեր հին,-  
Զկա՞ր արդյոք գետ մի հորդ,  
Որ գերության անհաղորդ՝  
Լուրթ՝ հոսելով դարից դար՝  
Մթության մեջ այն համառ  
Այս այգաբացն էր կրում,  
Հո՛ւր այգաբացն այս հեռու՝  
Հնուց պահած իր ջրում  
Օ՛, ըղձակա՛ն այս հեռուն...  
Կքած կյանքի բեռի տակ՝  
Ոգի՛ անկոր, հո՛ւր գետակ...  
Ահա վառվում է մեր մոր  
Հաղթանակի լույսը բորբ.  
Լվանում է նա հիմա

Վառվող ոգին մեր անմահ,  
Զքնաղ արև՛ն այդ արի,  
Վառված հորով աշխարհի...  
Զկա՛ ուրիշ արև է՛լ.  
Նա՛ է միայն, որ դարեր  
Ամմար՝ պիտի արևե՛...  
Լույսով վառված սակայն այդ՝  
Նժարներից հիմա մենք  
Հիմարությամբ չթափենք  
Իմաստությունն այն արար.-  
Մեր անցյալի խորամիտ  
Է՛ջն այն արդար ու ռամիկ՝  
Մեծահանճար ու վարար...  
9.V.1933 թ.

## «ԳԱԱ-ում մեկնարկեց «Պրիմակովյան ընթերցումներ» համաժողովի արտագնա նստաշրջանը



Սույն թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Պրիմակովյան ընթերցումներ» համաժողովի արտագնա նստաշրջանը՝ նվիրված Հարավային Կովկասի արդի խնդիրների վերլուծությանը: Այն կազմակերպվել է Հայաստանում «Ռոսսոտորուդնիչեստվո» դաշնային գործակալության ներկայացուցչության, Եվգենի Պրիմակովի անվան համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ազգային հետազոտական ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ համատեղ Ռազմավարական հետազոտությունների և նախաձեռնությունների վերլուծական կենտրոնի կազմակերպչական աջակցությամբ:

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց Հայաստանում «Ռոսսոտորուդնիչեստվո» դաշնային գործակալության ներկայացուցչության ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը և շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպմանն աջակցություն ցուցաբերած բոլոր կողմերին:

Իր ելույթում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանն ասաց. «Մենք ողջունում ենք «Պրիմակովյան ընթերցումներ» համաժողովի կազմակերպչական կոմիտեի համաժողովի արտագնա նստաշրջանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացնելու որոշումը: Մեր ակադեմիաները, մեր գիտնականները պատմականորեն կապված են իրար հետ, և այս համաժողովը ևս մեկ քայլ է մեր երկու երկրների ակադեմիաների միջև համագործակցության զարգացման ուղղությամբ:

Համաժողովի ընթացքում կանցկացվեն կառուցողական քննարկումներ, տեղի կունենա բաց գիտական երկխոսություն խոշոր փորձագիտական, վերլուծական կենտրոնների գիտնականների:

րի, փորձագետների, մասնագետների միջև, կքննարկվեն գլոբալ և տարածաշրջանային հարցեր: Այսօր դա կարևոր և պահանջված է: Մաղթում են բոլորին բեղմնավոր աշխատանք»:

Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը նշեց՝ «Պրիմակովյան ընթերցումներ» համաժողովի արտագնա նստաշրջանի՝ ՀՀ ԳԱԱ-ում անցկացումը միջոցառմանը հաղորդում է մոր կշիռ և հեղինակություն: «Վստահ եմ, որ նստաշրջանի մասնակիցներն առարկայական և բեղմնավոր կքննարկեն սուր և արդիական հարցերը և կնշակեն առաջարկություններ դրանց լուծման համար: Մեր երկրներն ունեն այդ առաջարկությունների կարիքը», - ասաց Սերգեյ Կոպիրկինը: Դեսպանն ընթերցեց Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի ուղերձը. «Սրտանց ողջունում են Երևանում անցկացվող «Պրիմակովյան ընթերցումներ» համաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին: Ներկայիս նստաշրջանն անցկացվում է Հայաստանում այն տարում, երբ մենք նշում ենք մեր եղբայրական երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը: Անցած տասնամյակների ընթացքում, հենվելով բարեկամության և փոխադարձ համակրանքի վրա, մեզ հաջողվել է ամուր հիմքեր դնել երկարաժամկետ ռազմավարական գործընկերության և դաշնակցության համար: Այսօր դուք դիտարկելու եք հարցերի լայն շրջանակ՝ սկսած ռուս-հայկական կապերի հեռանկարների վիճակից մինչև ընդհանուր տարածաշրջանային համագործակցության առաջնադասն ճանապարհներ: Վստահ եմ, որ քննարկումների արդյունքները թույլ կտան մշակել օգտակար և գործնական առաջարկություններ, կնպաստեն մեր ժողո-

վորդների միջև վստահության և փոխըմբռման ամրապնդմանը: Մաղթում են ձեզ բեղմնավոր աշխատանք»:

«Ռոսսոտորուդնիչեստվո»-ի ղեկավարի տեղակալ Դմիտրի Պոլիկանովը նշեց. «Շատ կարևոր է, որ այս դժվարին ժամանակներում անցկացվում են նման բարդ քննարկումներ: Եթե մենք ուզում ենք այս մոլորակի վրա գոյատևել, պետք է ընդհանուր լեզու գտնենք: Եվ հենց գիտնականները կարող են օգնել մշակելու այդ ընդհանուր լեզուն»:

Եվգենի Պրիմակովի անվան համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ազգային հետազոտական ինստիտուտից Ֆյոդոր Վոյտովսկին ասաց. «Ինձ համար մեծ պատիվ է գտնվել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում, որի հետ մեր ինստիտուտը երկար տարիների գիտական կապեր ունի: Հայ գործընկերների հետ մեր ինստիտուտն անցկացնում է սեմինարներ և գիտաժողովներ: Հույս ունեմ, որ այստեղ մենք կունենանք բաց, անկեղծ, երբեմն էլ բարդ քննարկում: Մենք դրան պատրաստ ենք»:

ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանն անդրադարձավ Արցախի հարցին: «Արցախի հիմնախնդիրը լուծում չի ստանում երկու պատճառներով: Ադրբեջանն արհամարհում է Արցախի հիմնախնդիրն առնչվող պատմական, ազգային, մշակութային և իրավական օբյեկտիվ իրողությունները՝ նպատակ հետապնդելով գրավել Արցախի տարածքը: Հաջորդ պատճառն այն է, որ Ադրբեջանը կեղծ դրույթ է պարտադրում աշխարհին՝ իբր Արցախն Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքն է, մինչդեռ այն 1300 տարի հանդիսացել է հայկական պետության բաղկացուցիչ մաս, 1813 թվա-

կանից ունեցել է անկախ պետականության զանազան կազմավորումներ, իսկ Ադրբեջանն ունի 100 տարվա պատմություն, այդ թվում 70-ը՝ խորհրդային Միության կազմում: Այսօրվա խնդիրն է մերժել թուրք-ադրբեջանական տանդեմի պնդումն այն մասին, որ Արցախն Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքն է, որովհետև այն չունի իրավական, աշխարհագրական և պատմամշակութային հենք, մշակել միջոցառումներ Արցախի Հանրապետության անվտանգության ամրապնդման համար՝ վերականգնելով Արցախի տարածքը և Ռուսաստանի Դաշնության ու այլ բարեկամ երկրների հետ միասին ապահովել Արցախի Հանրապետության անվտանգությունը»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը նշեց. «Կուտակվել են շատ հարցեր, և հնարավոր պատասխանները գտնելու համար կարևոր է լսել տարբեր երկրների վերլուծաբանների կարծիքը: Մեզ համար հատկապես կարևոր է քննարկել տարածաշրջանային և միջազգային հարցերը Ռուսաստանի առաջատար փորձագետների հետ: Մեզ համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Արցախի հարցով քննարկումները: Նաև շատ կարևոր է հաստատել և ամրապնդել մեր կապերը»:

«Պրիմակովյան ընթերցումներ» գիտական և փորձագիտական համաժողովը միջազգային հարաբերությունների և համաշխարհային տնտեսության ոլորտի փորձագետների ամենամյա միջազգային հանդիպում է: Այն առաջին անգամ անցկացվել է 2015 թվականին և անվանվել է գիտնական և պետական գործիչ Եվգենի Պրիմակովի անունով:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

### Նոր խթան հայ-լիտվական գիտական հարաբերությունների զարգացման համար

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանն ընդունեց Լիտվայի Հանրապետության գիտությունների ակադեմիայի տեխնիկական գիտությունների բաժանմունքի վարիչ, Տվյալների գիտության և թվային տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր, ակադեմիկոս Գինտաուտաս Չեմիդային: Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության զարգացման հարցերը:

Ակադեմիկոս Գինտաուտաս Չեմիդայն ծանոթացավ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գործունեությանը: Նա նաև այցելեց Երևանի պետական համալսարան:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## ԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԿՅԱՆՔ

Արմեն Միսոյանի ծննդյան 90-ամյակի առթիվ

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի սաղմնաքիմիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սիմոնյանը, գերազանցությամբ ավարտելով Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, կենսաքիմիայի ինստիտուտում աշխատանքի է անցել 1961 թվականին: Անցնելով ակադեմիկոս Հ. Բունիաթյանի ստեղծած Հայկական կենսաքիմիական և Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում ակադեմիկոսներ Ս. Ե. Սևերինի և Վ. Պ. Սկուլաչյովի կենսաքիմիական ու կենսաէներգիական գիտական դպրոցները՝ նա Հայաստանում ստեղծել է էվոլյուցիոն կենսաէներգիական ուղղությունը: Ակադեմիկոս Վ. Սկուլաչյովը նրա մասին գրել է. «Պրոֆեսոր Սիմոնյանի շնորհիվ Հայաստանում ստեղծվել և հաջողությամբ զարգանում է էվոլյուցիոն կենսաէներգետիկայի ուղղությունը: ԱՊՀ երկրներում Ա. Սիմոնյանը էվոլյուցիոն կենսաէներգետիկայի բնագավառում ճանաչված գիտնական է, իսկ սաղմնաքիմիայի լաբորատորիան սակավաթիվներից մեկն է, որտեղ արդեն մի քանի տասնամյակ հետաքրքիր հետազոտություններ են կատարվում գիտության այդ բնագավառում»:

Ա. Սիմոնյանի հետազոտությունները նվիրված են կենդանիների սաղմնային զարգացման ընթացքում նյարդային և այլ հյուսվածքներում կենսաէներգիական մեխանիզմների օնտոգենետիկ ու ֆիլոգենետիկ էվոլյուցիոն փոփոխարարությունների ուսումնասիրությանը: Նրա կողմից ազատ և ֆոսֆորիլացման հետ կապված օքսիդացման փոփոխարարությունների հայտնաբերումը զարգացող սաղմի ուղեղում կենսաէներգիական բնական մեխանիզմներից մեկն է, որի շնորհիվ ձևավորվող բջիջներն ապահովվում են անհրաժեշտ էներգիայով:

Կարևոր նշանակություն ունեցող տվյալներ են ստացվել ցրտային սթրեսի ներգործությամբ թռչնի զարգացող սաղմի բջիջներում կենսաէներգիական պրոցեսներում դիտվող տեղաշարժերի վերաբերյալ: Այդ արդյունքներն ունեն հիմնարար, ինչպես նաև կիրառական նշանակություն:

Առաջին անգամ արվել է կարևոր կենսաքիմիական եզրակացություն. Հեկկել-Մյուլլերի բիոգենետիկ օրենքը, որն արտացոլում է օնտոգենեզի ու ֆիլոգենեզի էվոլյուցիոն կապը, ամբողջությամբ կիրառելի է նաև բջիջներում և ենթաբջջային կառուցվածքներում մոլեկուլային մակարդակով ընթացող կենսաքիմիական և մասնավորապես, կենսաէներգիական ռեակցիաների համար: Նման եզրակացությունը նորովի է մեկնաբանում և ընդլայնում մեր պատկերացումներն օնտոգենեզի և ֆիլոգենեզի էվոլյուցիոն կապի վերաբերյալ գոյություն ունեցող դասական ձևաբանական, ամատոմիական, սաղմնաբանական, հենթաբանական հիմնավորումներ՝ դրանց ավելացնելով նաև կենսաքիմիական և մասնավորապես կենսաէներգիական փոխանակության հետ կապված բացահայտումները:

Ցրտային սթրեսի դեպքում թռչնի զարգացող սաղմի բջիջներում կենսաէներգիական կարևոր տեղաշարժեր են դիտվում, որոնք զգալիորեն խթանում են դրանց աճը և զար-



գացումը: Մշակվել է գյուղատնտեսական թռչունների ճտահանության գիտականորեն հիմնավորված նոր տեխնոլոգիա, որի կիրառումը ճտերի ելքը բարձրացնում է 8-12 տոկոսով և զգալիորեն նպաստում կենսունակ սերնդի աճին: Խորհրդային տարիներին այդ մեթոդը փորձարկվել և կիրառվել է հանրապետության թռչնաբուծական տնտեսություններում և հսկայական տնտեսական արդյունք տվել:

Շվեդիայի Գյոթեբորգի համալսարանի հետ համատեղ հետազոտություններն առաջին անգամ բացահայտել են նյարդասպեցիֆիկ սպիտակուցների դերը նյարդային հյուսվածքի էներգետիկ փոխանակության մեջ՝ հիմնավորելով հիշողության ֆունկցիայում էներգիայի հոսքի անհրաժեշտության վերաբերյալ Ա. Սիմոնյանի կողմից առաջ քաշված վարկածը:

Ա. Սիմոնյանը Լայպցիգի համալսարանի նյարդաքիմիայի բաժնի աշխատակիցների հետ միասին մասնակցել է ուղեղի բջիջներում դեհիդրոգենազների ակտիվության նյարդահումորալ կարգավորման գիտական նախագծի մշակմանը, որի արդյունքները լույս են տեսել առանձին աշխատությունով, զեկուցումներով հանդես է եկել Եվրոպական կենսաքիմիական ընկերության (FEBS) կոնգրեսների աշխատանքներին՝ Պրագայի, Լայպցիգի, Գյոթեբորգի, Ստոկհոլմի, Բեռլինի համալսարաններում:

Ա. Սիմոնյանն ավելի քան 350 գիտական աշխատանքների, երկու մենագրությունների և կենսաբանության արդիական խնդիրներին նվիրված բազմաթիվ գիտահանրամատչելի հոդվածների հեղինակ է: Նրա «Գյուղատնտեսական թռչունների սաղմնային զարգացումը և ճտահանությունը» գիրքը՝ որպես ուսումնական ձեռնարկ, օգտագործվում է

գյուղատնտեսական բուհերում:

Արգասաբեր է նաև Ա. Սիմոնյանի աշխատանքը մասնագիտական բառարանագրության և հայերեն ժամանակակից կենսաբանական միասնական տերմինաբանություն ստեղծելու բնագավառում: Նա հայոց լեզվով միակ ռուս-հայերեն կենսաքիմիական բացատրական բառարանի հեղինակն է: Բառացանկը ներառում է կենսաքիմիայի և մոլեկուլային կենսաբանության մեջ օգտագործվող ավելի քան 5000 տերմին ու հասկացություն, տրվել են դրանց բացատրությունները, և մշակվել է հայերեն միասնական կենսաքիմիական տերմինաբանություն: Հատուկ ուշադրության արժանի է Ա. Սիմոնյանի (համահեղինակ՝ Ի. Բատիկյան) հրատարակած «Ռուս-հայերեն-անգլերեն կենսաբանական բացատրական բառարանը», որը պարունակում է ավելի քան 8000 տերմին կենսաբանության տարբեր բնագավառների վերաբերյալ, բերված են դրանց ժամանակակից բացատրությունները, որոնք հանրագիտարանային բնույթ ունեն: Ա. Սիմոնյանը և Ի. Բատիկյանը հրատարակել են նաև «Անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարան», որը պարունակում է ժամանակակից կենսաբանությանը և բժշկագիտությանը վերաբերող ավելի քան 80000 տերմին, դա հսկայաժապավ և հազվագյուտ կենսաբանական բառարան է հայ մասնագիտական բառարանագրության մեջ և հայերեն կենսաբանական միասնական տերմինաբանություն ստեղծելու գործում:

Գավառի պետական համալսարանի ստեղծման առաջին օրից համալսարանի հիմնադիր ռեկտոր, պրոֆ. Հրանտ Հակոբյանի և պրոֆ. Հրանուշ Հակոբյանի հրավերով Ա. Սիմոնյանն ավելի քան 25 տարի աշխատել է այդ համալսարանում: Նա հիմնադրել է կենսաբանության և էվոլյուցիայի ամբիոնը, հանդիսացել է դրա անփոփոխ վարիչը և կարևոր աշխատանք է կատարել երիտասարդ կենսաբան, էվոլյուցիոն դեղագործ-քիմիկոս մասնագետների պատրաստման գործում՝ միաժամանակ ամրապնդելով այդ բուհի և ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի գիտատնտեսական աշխատանքային համագործակցությունը:

Իր ծննդավայրում՝ Գավառում, բուհական համակարգում ունեցած մեծ ավանդի, գիտական, հասարակական ակտիվ գործունեության համար քաղաքի ավագանու որոշմամբ նրան շնորհվել է «Գավառի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՀՀ մախագահի հրամանագրով Ա. Սիմոնյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Պրոֆ. Ա. Սիմոնյանը Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի, ուղեղի հետազոտության համաշխարհային ընկերության (IBRO) և Եվրոպական կենսաքիմիական ընկերության (FEBS) անդամ է:

Ա. Սիմոնյանն այսօր էլ իրեն բնորոշ աշխատասիրությամբ ու բարեխղճությամբ օգնում է երիտասարդ գործընկերներին Հայաստանում էվոլյուցիոն կենսաէներգետիկայի ուղղությունը զարգացնելու գործում: Ջերմորեն շնորհավորելով նրան իր հոբբելյանի առթիվ՝ ցանկանում ենք առողջություն և երկար կյանք:

**Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ա. ԱՆՏՈՆՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ**



Սույն թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրենի պաշտոնում միաժամյն ընտրվեց բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանը:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ հիմնարար

## Մայա Գրիգորյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն

գիտական գրադարանի՝ 2023–2027 թթ. զարգացման ծրագիրը՝ Մայա Գրիգորյանը նշեց, որ գրադարանի հավաքածուների համալրման նպատակով օգտագործելու են գրադարանի համագործակցային բոլոր հնարավորությունները, ստեղծելու են նոր կապեր: Իրականացվելու են որոնողական աշխատանքներ աշխարհի խոշորագույն գրադարանների թվային պահոցներում հայտնաբերելու, ուսումնասիրելու և թվայնացնելու հայագիտական հավաքածուները: Իրականացնելու են հավաքածուների ֆիզիկական պահպանությանը միտված միջոցառումներ: Պարբերաբար արդիականացնելու են թվային գրադարանի ենթակառուցվածքը՝ հիմք ընդունելով այդ բնագավառի վերջին նվաճումները: Տրամադրելու են թվային նյութերի որոնման լայն հնարավորություններ, ինչպես նաև նախատեսելու են ծառայություններ դեպի արտոնագրված թվային պաշարներ: Ներդրվելու են շտեմարանների նոր մոդելներ:

Հիմնարար գիտական գրադարանն օժանդակելու է Հայաստանի Հանրապետությունում գիտության և կրթության

զարգացմանը, հանդես է գալու գիտական ծրագրերով ու հրապարակումներով, ունենալու է համատեղ մասնակցություն հետազոտական նախագծերին, սերտ համագործակցելու է ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի հետ, բարելավելու է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» մագիստրոսական կուրսի առարկայաշարը, շարունակելու է ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտությունների կազմման աշխատանքները, մասնակցելու է հայագիտական արժեք ներկայացնող մատենագիտական ցանկերի պատրաստման աշխատանքներին, մասնակցելու է Հայաստան-Սփյուռք գրադարանագիտական, մշակութային կապերի ամրապնդման աշխատանքներին: Մշակվելու են ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան-վիքիպեդիա համատեղ ծրագրեր, ինչպես նաև գրադարանային տարբեր նախագծերում կիրառվելու է «Վիքիպեդիա»-ի գործիքակազմը:

Մայա Գրիգորյանը ծնվել է 1978 թ.: 2000 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, 2004

թ.-ին՝ նույն ինստիտուտի ասպիրանտուրան: 2018 թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ ստանալով մագիստրոսի աստիճան «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ մասնագիտությամբ»: 2021 թ.-ից սովորում է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դոկտորանտուրայում:

2009 թ.-ից դասախոսում է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: 2001-2021 թթ. եղել է Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի վարիչ: 2021 թ.-ից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի գիտական քարտուղարն է: 2022 թ.-ից եղել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի մեթոդիստը:

Մայա Գրիգորյանը 30 հոդվածի հեղինակ է:


**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

**«Գիտության և մշակույթի պատմության մեջ ակադեմիկոս Յուսեփ Օրբելու գործունեությունը, որպես Երմիտաժի տնօրեն, կմնա հավերժ»:**

**Ա. Վ. Կոլցով**

Ծաղկածորում է գտնվում Օրբելի եղբայրների տուն-թանգարանը՝ մի սրբազան վայր, որը հայերին պետք է հիշեցնի, թե ինչ արժանավոր զավակներ է ունեցել նա մոտիկ անցյալում: Այդ թանգարանը սրբորեն ու հատուկ խանդավառություն է երկար տարիներ պահպանում հրեշտակների նման հսկում են Մարինե Բունիաթյանը և Գերասիմ Մկրտչյանը, որոնք մեծ ավանդ ունեն թանգարանը հարստացնելու և նրա շուրջը գիտական մթնոլորտ ստեղծելու գործում:

Խ. Աբովյանի անվան ՅՊՄՀ բանասիրական ֆակուլտետը և հայ հին ու միջնադարյան գրականության ամբիոնը մի քանի միջոցառումներ է կազմակերպել Օրբելի եղբայրների թանգարանի աշխատակազմի հետ: Վերջինը 2019-ին էր և նվիրված էր



## ՇՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ԸՎԵՐԺՈՐԵՆ ԸԱՅԵՐԻՆ ՊԵՏՔ Է ՈՒՂԵԿՑԻ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՍՐԲԱԶԱՆ ԽՈՐԸՐԴԱՆԻՇ

«Սասունցի Դավիթ» վիպերգի համահավաք բնագրի հրատարակման 80-ամյա հոբելյանին: Տուն-թանգարանում կազմակերպված հանրապետական գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ոչ միայն բանասիրական ֆակուլտետի դասախոսները, ուսանողները, այլև իրենց մասնակցությունը բերեցին ԶԳԱՄ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը և «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Զաքարյանը:

Այս միջոցառումը որպես ֆիլմ ցուցադրվեց հեռուստատեսությամբ՝ «Հաջողության բանաձև» ֆիլմաշարի ձևաչափով:

Մ. Բունիաթյանի և Գ. Մկրտչյանի ջանքերով մի քանի տասնամյակ հրատարակվել են Օրբելիների կյանքն ու գործը ներկայացնող բազում գրքեր: Եվ ահա բոլորովին վերջերս լույս է տեսել մի հրաշալի գիրք՝ «Երմիտաժի սխրանքը» խորագրով: Գրքի հեղինակներն են Մ. Պ. Վարդապետյան, Յու. Ի. Ռեստը: Գիրքը վերահրատարակություն է, սակայն նորությունն այն է, որ ռուսերեն բնագրի հետ դրված է հայերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Էդվարդ Մանուկյան):

Գիրքը երկվեզու է և շքեղորեն հարստացված է Երմիտաժի գանձերն ու շրջափակման օրերը ներկայացնող նկարներով:

«Երմիտաժի սխրանքը» վավերագրական գրքի կենտրոնական դեմքը ակադեմիկոս Օրբելին է՝ մեծ հնագետը, պատմաբանը, բանասերը, գիտական գործի կազմակերպիչը, Հայաստանի գիտությունների ա-

կադեմիայի առաջին նախագահը:

Հիմա, երբ մեր երկիրը դժվար ժամանակներ է ապրում, «Երմիտաժի սխրանքը» գիրքը խիստ արդիական է, հայրենիքին ու նրա արժեքներին անմնացորդ նվիրված իրական հերոսների կերպարներով, որոնց կենտրոնական դեմքերից են Յուսեփ Օրբելին՝ Երմիտաժի երկարամյա տնօրենը, և նշանավոր ուրարտագետ, Կարմիր բլուրի հմուտ պեղող և դրա գանձերը աշխարհին ներկայացնող, հայ ժողովրդի մեծ բարեկամ Բորիս Պիոտրովսկին:

Հուզիչ է կարդալ, թե ինչպես Երմիտաժի բոլոր աշխատողները՝ տնօրենից մինչև պահակները, բանվորները, հսկիչները, Երմիտաժ թանգարանին նվիրված են եղել այնպես անմնացորդ, ինչպես զգայուն ծնողները նվիրվում են իրենց զավակներին:

Յուսեփ Օրբելին՝ զգալով, որ կարող է Համաշխարհային երկրորդ պատերազմը մտնել նաև Խորհրդային Միություն, նախապես հսկայական աշխատանք է կատարել, որպեսզի վտանգի դեպքում արագորեն կազմակերպի Երմիտաժի գանձերի տարահանումը:

Երկար եջերով նկարագրվում է, թե ինչ հերոսական ջանքերով Երմիտաժի աշխատակիցները արվեստի գլուխգործոցները փաթեթավորում են, դնում հսկա արկղերի մեջ ու տեղափոխում բեռնատար գնացքների վագոնների մեջ ու հենց պատերազմի առաջին շաբաթը տեղափոխում են Սվերդլովսկ: Իհարկե, ուղարկվում են առաջին հերթին համաշխարհային արվեստի գլուխգործոցները: Վերածննդի մեծ վարպետների

կտավները հանվում են շրջանակներից, փաթեթավորում հատուկ գլանների վրա, այնքան ուշադիր, ինչպես փաթաթում են նորածին երեխային, որպեսզի հանկարծ չփչանան: Այդ տազնապներով լի աշխատանքն այնքան տաքավորիչ է նկարագրված գրքում, որ ընթերցողը համակվում է նույն տազնապներով, միաժամանակ հիանում Երմիտաժի աշխատակիցների 24-ժամյա աշխատանքային օրերի նկարագրությանը ծանոթանալով:

Տարիանվոր նկարների մեջ էր Ռենդրանդտի «Անառակ որդու վերադարձը» կտավը, որը հսկայական չափեր ուներ (262 սմ բարձրություն և 205 սմ լայնություն): Այն Սվերդլովսկ է ուղարկվում շրջանակով:

Պարզվում է, որ Երմիտաժի գանձերը տարահանվել են նաև 1812 թվականի Հայրենական պատերազմի ժամանակ, սակայն այն ժամանակ թանգարանի գանձերը չուներին այն հսկա քանակը, որ կար 1941 թվա-

կանի հունիսի 22-ին: Այդ ժամանակ միայն դրամագիտական բաժնի հարստությունը, առանց կրկնօրինակների, հաշվվում էր երեք հարյուր հազար մետաղադրամ: Հետաքրքիր է, որ Պետրոս Առաջինի մոմե արծանը մերկացրել են, ապա մոմե մարմինը բաժանել մասերի ու այդպես տեղադրել արկղերում:

Երբ Երմիտաժի գանձերի առաջին խմբաքանակով բեռնված գնացքը ծանապարհում են, բոլորը տեսնում են հետևյալ հուզիչ տեսարանը. «Վերջինը, ում տեսան մեկնող Երմիտաժիցիները, իրենց տնօրենն էր: Բաց գլխով նա կանգնած էր հարթակի վերջում՝ լուսավորության սյան մոտ ու լաց էր լինում»:

Օրբելին գիտեր, որ Հիտլերը հատուկ հրաման էր տվել ոչնչացնել ողջ Լենինգրադը: Նա իր գերմարդկային ուժերով փաստորեն հաղթում էր թշնամուն, հաղթում էին նաև Երմիտաժի բոլոր աշխատակիցները:

Չնայած Լենինգրադի շրջափակումը տևեց 900 օր, սակայն առաջին երկու շաբաթում երկու խմբաքանակի գլուխգործոցներ արդեն ուղարկվել էին Սվերդլովսկ:

Տարիանված գանձերն ուղեկցող գիտաշխատողները չգիտեին, թե ուր են գնում. ամեն ինչ խիստ զաղտնի էր:

Գրքում ճնշող նկարագրություններ կան Լենինգրադի շրջափակման ժամանակ բազմահազար կամանց, տղամարդկանց, երեխաների մահերի՝ սովից ու ցրտից: Մարդկանց թաղում էին առանց դագաղների, ընդհանուր գերեզմաններում: Սովի, մթության, ցրտի պայմաններում Օրբելին կազմակեր-

պում է երկու հոբելյաններ՝ պարսիկ բանաստեղծ Նիզամու և ուզբեկ բանաստեղծ Նավոյ:

Շրջափակման տարիներին մահը տանում է Երմիտաժի բազմաթիվ աշխատողների, որոնք մեռնում էին հենց թանգարանում՝ սովից ու ցրտից, հաճախ գրիչը ձեռքին, մոմի լույսի տակ գրելիս:

1942 թ. մարտին Օրբելին Երմիտաժի տնօրինությունը ժամանակավորապես հանձնում է հեղինակավոր արվեստագետ Դոբրոկլոնսկուն, որը թանգարանի գլխավոր ֆոնդապահն էր, ու Պիոտրովսկու հետ մեկնում է Երևան:

Գրքում նկարագրվում է, թե ինչպես են ֆաշիստները ռմբակոծել Երմիտաժի շենքերը, հողին հավասարեցրել Պետերհոֆի պալատական շքեղ համալիրը:

Շրջափակման տարիներին Լենինգրադի այգիները վերածվում են բանջարանոցների, որպեսզի փոքր-ինչ մեղմեն սովը:

Շրջափակման ավարտվելուց հետո Օրբելին շատ արագ վերադառնում է Լենինգրադ: Գերմարդկային ջանքերով, պետական հզոր աջակցությամբ շատ կարճ ժամանակում վերանորոգվում են Երմիտաժի շենքերը, և գանձերը վերստին դրվում են թանգարանի իրենց տեղերում. «1945թ. նոյեմբերի 4-ին՝ կիրակի առավոտյան, Երմիտաժի վաթսուհինը դահլիճները այնպիսի տեսք ունեին, ինչպես որ եղել էր 1941թ. հունիսի 22-ին՝ կիրակի առավոտյան»:

1945-ի նոյեմբերին Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում սկսվեց Նյուրնբերգյան դատավարությունը, որը տևեց մոտ մեկ տարի: Օրբելին այդ դատավարության ժամանակ հանդես եկավ որպես մեղադրող կողմի վկա. «Օրբելին հայացքը թեքեց մեղադրյալների կողմը, մի պահ կանգ առավ Գյորինգի վրա. այդ Գյորինգն է ստորագրել Լենինգրադի լիակատար ոչնչացման պլանը»:

Փայլուն տրամաբանությամբ ու անառարկելի փաստերով Օրբելին ապացուցեց, որ մարդկային բանականության մթազնելու դեպքում արթնանում է հրեշտը: Ահա նրա խոսքից մի հատված. «Ես երբեք հրետանավոր չեմ եղել: Բայց ելնելով այն բանից, որ Երմիտաժի վրա ընկել է 30 արկ, իսկ նրա կողքին գտնվող կամրջին՝ ընդամենը մեկը, ես կարող եմ համոզված դատել, թե ուր էին մշան բռնում ֆաշիստները: Այդ սահմաններում ես հրետանավոր եմ»:

Այս գիրքը մշտական գգուշացում է մարդկությանը՝ չոչնչացնել դարերի ընթացքում ստեղծված համամարդկային արժեք դարձած հոգևոր արժեքները՝ անկախ այն փաստից, թե որ ազգն է այն ստեղծել: Այս գրքից բխող գգուշացումը վերածամանակյա է, իսկ Չժուսեփ Օրբելու կերպարն ուղեցույց պետք է լինի ամեն մոր եկող սերնդի և հատկապես հայերի համար:

**Անիտա ԴՈՒՈՒՄԱՆՅԱՆ**

## ՇՇ ԳԱՄ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց քիմիական գիտությունների դոկտոր Սահակ Գասպարյանը

Սույն թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱՄ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց քիմիական գիտությունների դոկտոր Սահակ Գասպարյանը:

Սահակ Գասպարյանը նշեց Կենտրոնի առջև ծառացած խնդիրները, որոնցից ամենագլխավորը ջրավազանի տարածքում բազմաբնակարան շենքի կառուցումն է: «Այդ տարածքն ապօրինի օտարվել է, վաճառվել ու մի քանի անգամ վերավաճառվել: Այստեղ ներկայիս սեփականատերը նախատեսել է կառուցել բազմահարկ բազմաբնակարան շենք՝ ստորգետնյա ավտոկայանատեղով, ինչն անհամատեղելի է գիտական կենտրոնի հետ: Բազմաբնակարան շենքի կառուցումն էականորեն հակասում է սամիտարախիզիների, հրդեհային անվտանգության և քաղաքաշինական նորմերին ու կանոններին, հետևաբար՝ մեծածավալ շինարարական աշխատանքներից առաջացած աղմուկը, փոշին,

ցնցումները կխաթարեն Կենտրոնի բնականոն աշխատանքը և անվտանգությունը», - ասաց նա:

Ներկայացնելով Կենտրոնում ընթացիկ և առաջիկայում ծրագրվող աշխատանքները՝ Սահակ Գասպարյանն ասաց, որ մոլեկուլի կառույցի ուսումնասիրման Կենտրոնում կատարվող հիմնական գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց նախատեսվում է իրականացնել Հայաստանում արտադրվող և ներմուծվող սննդի, տարատեսակ նյութերի և այլ ապրանքատեսակների որակի հսկողություն: Նախատեսվում է «Կենսաբանական բաժնի» վերականգնում ստեղծել լաբորատոր կենդանիների բուծարան և զբաղվել գծային լաբորատոր կենդանիների բուծմամբ: Մտադիր են կառուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բժշկականաբանական հետազոտությունների կլինիկա լաբորատոր կենդանիների համար: Կիտրացվի համագործակցություն Հայաստանի և արտասահմանյան երկրների գիտահետազոտական հաստատությունների հետ: Կշարունակվեն Կենտրոնի



կողմից մեծագրությունների, ժողովածուների տպագրությունը, կիրառական մշակակություն ունեցող նյութերի և միացությունների սինթեզի մշակումը, արտադրության կազմակերպումն ու վաճառքը, երիտասարդ կադրերի պատրաստումը:

Սահակ Գասպարյանը ծնվել է 1963 թ. Երևանում: 1984 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1999 թ. պաշտպանել է «Բնական հակաուռուցքային հակաբիոտիկ սարկոնիդիցին նոր ածանցյալների սինթեզը և հատկությունները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը և ստացել քիմիական գիտությունների թեկնածուի աստիճան: 2018 թ. պաշտպանել է «Հետա-

գոտություններ 2-արիլ- և 2-հետերիլպիրոլիդների ուսումնասիրության բնագավառում» թեմայով դոկտորական ատենախոսությունը և ստացել քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նրա գիտական հետաքրքրություններն են՝ օրգանական քիմիա, դեղագիտական քիմիա, միջֆազային կատալիզի ռեակցիաներ, քիմիական կառուցվածք-կենսաբանական ակտիվություն կապի ուսումնասիրում, 5- և 6-անդամ հետերոցիկլիկ միացություններ:

Սահակ Գասպարյանը 1999-2001 թթ. եղել է «Liquor Pharmaceuticals» դեղագործական ընկերության քիմիկ-տեխնոլոգ, 1984 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱՄ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում՝ հակաբիոտիկների սինթեզի լաբորատորիայում՝ սկսելով որպես կրտսեր գիտաշխատող, ապա 2009 թ.-ից դառնալով լաբորատորիայի վարիչ: 2022 թ. նա նշանակվել է ՀՀ ԳԱՄ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Սահակ Գասպարյանը 75 գիտական աշխատանքի հեղինակ է:

**ՀՀ ԳԱՄ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Ակադեմիկոս Վլադիմիր Միքայելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022 թ. հոկտեմբերի 11-ին կյանքից հեռացավ հայ ակադեմիկոս, կիսահաղորդիչների ֆիզիկայի և տեխնիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, արեգակնային էներգիայի փոխակերպման մեթոդների և կիսահաղորդչային սենսորների բնագավառների ճանաչված մասնագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Վլադիմիր Միքայելի Հարությունյանը:



գիտական կենտրոնը:

Ակադեմիկոս Վ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն էր: Նրա գիտական աշխատանքներին բնորոշ է հիմնարար հետազոտությունների և կիրառական բնույթի մշակումների համադրումը: Վ. Հարությունյանի ուշադրության կենտրոնում են եղել կիսահաղորդիչ-էլեկտրոնիկա, գազ, հեղուկ, բյուրեղ սահմաններին, տարբեր կիսահաղորդչային հետերոկառուցվածքներում, այդ թվում՝ բվանտային փոսեր, կետեր

Վ. Հարությունյանը ծնվել է 1940 թ. Երևանում: 1964 թ. Վ. Հարությունյանը գերազանցությամբ ավարտել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետը՝ կիսահաղորդիչներ և դիէլեկտրիկներ մասնագիտությամբ: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1977 թ.՝ դոկտորական ատենախոսությունները: 1981 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում, 1990 թ. ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ ակադեմիկոս՝ «Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա մասնագիտությամբ»: Վ. Հարությունյանն ընտրվել է նաև ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի և ճարտարագիտական միջազգային ակադեմիայի իսկական անդամ, 2 այլ ակադեմիաների, արևալիմ էներգիայի և նյութագիտության գծով միջազգային գիտական ընկերությունների անդամ և այլն: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի բյուրոյի և Գիտությունների ակադեմիայի միջազգային ասոցիացիայի «Ֆունկցիոնալ նյութեր էլեկտրոնիկայի համար» գիտական խորհրդի անդամ էր: Նա համրապետության մի շարք գիտական և փորձագիտական խորհուրդների և ԽՍՀՄ գիտական խորհուրդների անդամ էր: Երկար տարիներ եղել էր ԵՊՀ և ՀՀԳՀ հատուկ խորհուրդների անդամ:

1992 թ. Վ. Հարությունյանը եղել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագիրը, այն անգլերեն թարգմանությամբ ամբողջովին հրատարակվում է «Շարինգեր» (Գերմանիա) հրատարակչության կողմից «Journal of Contemporary Physics» վերտառությամբ, 2002 թ. նրա խմբագրությամբ հրատարակվել էր նաև «Armenian Journal of Physics» էլեկտրոնային ամսագիրը: Վ. Հարությունյանը եղել է «Nanomedicine, Nanotechnology and Nanomaterials» միջազգային ամսագրի խմբագիրներից և Ռուսաստանում, Ֆրանսիայում, Կանադայում, Սինգապուրում հրատարակվող 6 և Հայաստանում հրատարակվող 2 ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ:

1965 թ. Վ. Հարությունյանն աշխատել էր Հայաստանի ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, ընդ որում 14 տարի շարունակ եղել է կիսահաղորդչային սարքերի ֆիզիկայի լաբորատորիայի ամփոփոխ վարիչը: 1977թ. դեկտեմբերին Վ. Հարությունյանը հրավիրվել է Երևանի պետական համալսարան՝ ղեկավարելու ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի» ամբիոնը և «Կիսահաղորդչային նյութերի և սարքերի գիտահետազոտական լաբորատորիան»: Հետագայում Վ. Հարությունյանի նախաձեռնությամբ ամբիոնը վերանվանվել է «Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա», իսկ գիտահետազոտական լաբորատորիայի հիման վրա ստեղծվել է կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների

պարունակող, տարբեր երևույթների մանրակրկիտ ուսումնասիրությունները: Նա և իր գործընկերները խոշոր ներդրում են ունեցել կիրառական գիտության համար չափազանց կարևոր այնպիսի ոլորտների զարգացման գործում, ինչպիսիք են ֆոտոդետեկտորներն ինֆրակարմիր, ուլտրամանուշակագույն և միկրոալիքային սպեկտրային տիրույթներում: Նա զգալի ավանդ է ունեցել քիմիական սենսորների ստեղծման և արևի էներգիան քիմիական կամ էլեկտրական էներգիայի փոխարկիչների ստեղծման խնդիրների լուծման գործում:

Վ. Հարությունյանը հրատարակել է 3 մենագրություն, 12 գիրք և մի շարք ուսումնական ձեռնարկներ, գլուխներ արտերկրում հրատարակված 10 համատեղ մենագրություններում, 30 գրախոսական հոդված, ավելի քան 550 հոդված և զեկույց գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովների նյութերում: Բազմաթիվ աշխատություններ բարձր են գնահատվել գիտական հանրության և աշխարհի առաջատար գիտնականների կողմից, այդ թվում՝ Նոբելյան մրցանակակիրներ Ն. Ն. Սենեցովի և Ժ. Ի. Ալֆերովի: «Google Scholar» և «Mendeley» միջազգային գիտաչափական կազմակերպությունները տեղեկացրել են վերջին 25 տարվա ընթացքում արտասահմանում նրա հոդվածների 3600 հոդման և 65000 ընթերցումների մասին:

Վ. Հարությունյանի գիտական և գիտակազմակերպական գործունեությունը մեծապես նպաստել է Հայաստանում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը: Նրա գիտական ղեկավարությամբ պատրաստվել են 6 գիտությունների դոկտորներ և 30-ից ավելի գիտությունների թեկնածուներ:

Նրա գլխավորած թիմի գիտական աշխատանքները երկու անգամ արժանացել են ՀՀ Նախագահի մրցանակների: Նրա աշակերտների և գործընկերների շրջանում կան ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ և ՀՀ Նախագահի մրցանակի 7 դափնեկիր:

Գիտության մեջ ունեցած մեծ ձեռքբերումների և կադրերի պատրաստման ակտիվ գործունեության համար ակադեմիկոս Վ. Հարությունյանը պարգևատրվել է կառավարական պարգևով՝ Ա. Շիրակացու մեդալով, Հայաստանի գիտության և բարձրագույն կրթության նախարարության և Զրաժնային էներգիայի միջազգային ասոցիացիայի՝ 2019 թ. ոսկե և այլ մեդալներով:

Ակադեմիկոս Վ. Հարությունյանի՝ մեծ մարդու հիշատակը վառ կմնա գործընկերների, գիտական հասարակության, աշակերտների և նրան ճանաչող յուրաքանչյուրի սրտում:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն  
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի  
բաժանմունք



## ԵԳԱԾ-ը հայտարարում է «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթ»

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր»-ը հայտարարում է «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթ»: Մրցույթի նպատակն է նպաստել երիտասարդ գիտնականների կողմից կատարվող հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների, օտարալեզու տպագրությունների քանակի ավելացմանը:

Դրամաշնորհներ են տրվելու 2-3 երիտասարդ գիտնականներից բաղկացած խմբերին: Երկու հոգուց բաղկացած խմբերի ֆինանսավորման առավելագույն չափը 4.000.000 ՀՀ դրամ է, իսկ երեք հոգուց բաղկացած խմբերինը՝ 5.000.000 ՀՀ դրամ:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2022 թվականի նոյեմբերի 17-ն է: Հայտատուն պետք է հանդիսանա խմբի ղեկավարը և առնվազն պետք է լինի առկա/հեռակա ուսուցման ասպիրանտ կամ կրտսեր գիտաշխատող: Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան ՀՀ քաղաքացիներ կամ առնվազն մեկ տարի ՀՀ-ում կամ Արցախում մշտապես բնակվող և գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ գիտնականներ: Խումբը կարող է ունենալ արտասահմանյան խորհրդատու, ով պետք է լինի օտարերկրյա գիտահետազոտական կազմակերպությունում աշխատող և գիտական աստիճան ունեցող գիտնական, ում Հիդրի ինդեքսը (h-index) ըստ «Scopus» շտեմարանի տվյալների՝ պետք է լինի առնվազն 3:

Հետազոտությունը պետք է իրականանա 12 ամսվա ընթացքում: Հետազոտության ավարտին խումբը պետք է ունենա կամ անգլալեզու հրապարակում տեղական գիտական ամսագրերում, որոնք ընդգրկված են Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) ցուցակում, կամ անգլալեզու գիտական հոդված, որն ուղարկվել է (submitted) տպագրության և ստացել է առաջին գրախոսականը (review) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)», «Scimago Journal & Country Ranking (SJR)» <https://www.scimagojr.com/journalrank.php> պորտալում)՝ առնվազն Q4 քառորդում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման  
և հասարակայնության հետ  
կապերի բաժին**

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՅԼԱԶԳԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԿՅԱՆ-ՔՈՒՄ

Հայ գրականության անդամները վերջերս հարստացավ նոր, ուշագրավ և արժեքավոր հրատարակությամբ: «Օ-սիպ Մանդելշտամ. բանաստեղծը և Հայաստանը» գրքի հեղինակն Անուշավան Ջաքարյանն է: Գիրքը նվիրված է խորհրդային շրջանի ռուս (ծագումով հրեա) մեծանուն բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Մանդելշտամին, որը ճանաչում, պաշտում էր Հայաստանը: Այն տպագրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ: Գրքում առաջին անգամ հայերենով մանրամասնորեն ներկայացված են Օ. Մանդելշտամի կյանքը և գործունեությունը ու նրա սերտ առնչությունները Հայաստանի հետ: Այդ ամենն ամփոփված է գրքի մի քանի գլուխներում, որոնք կրում են հետևյալ խորագրերը. «Երկու խոսք», «Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործական ուղին», «Օ. Մանդելշտամը թիֆլիսում և Բաքվում», «Օ. Մանդելշտամը Հայաստանում», «Բանաստեղծը Շուշիում», «Հայաստան» բանաստեղծությունների շարքը: Թիֆլիսյան օրերը Եղիշե Չարենցի հետ», «Ֆայտոնչին» բանաստեղծությունը գրելու շարժառիթը», «Ճանապարհորդությունը Հայաստան» արձակ երկն ու դրա արձագանքները»: Գիրքը նաև ունի «Վերջաբանի փոխարեն», «Резюме», «Summary», «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ» բաժինները: Արդեն իսկ սույն խորագրերը խորապես իմաստավորում են ամբողջ գրքի բովանդակությունը:

Նախ՝ արդարացիորեն արժե անդրադառնալ գրքի հեղինակին: Բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմա-բանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող Անուշավան Ջաքարյանն իր ստեղծագործական բեղուն կյանքում, լինելով 22 մե-



նագրության ու ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների հեղինակ, բազմիցս անդրադարձել է XX դարի սկզբի առաջին քառորդի հայ իրականության, Հայոց ցեղասպանության հարցերին: Նաև նրա գիտական գործունեության մեջ զգալի տեղ ունեն հայ-ռուս պատմագրական և հատկապես մշակութային կապերին վերաբերող նյութերը: Նման գիտական-գրական ասպարեզում հատուկ նշանակություն ունեն Ա. Ջաքարյանի «Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը» (ռուսերեն), «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին», «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (1916–1921 թթ.)» (ռուսերեն) գրքերը և այլն: Նաև 2020 թ. նրա առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակված Ջապել Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աբստրյալ հայերը Միջագետքի մեջ)» գիրքը, որին անդրադարձել է նաև Սփյուռքի մամուլը:

Ա. Ջաքարյանի գիտական, գրական ստեղծագործության համալիրում հայ մեծերի շարքում են Կոմիտասը, Շիրվանզադեն, Հովհաննես Թումանյանը, Դավիթ Ամանունը, Ավետիք Իսահակյանը... Այժմ նրանց շարքում իր տեղն է գտել Օսիպ Մանդելշտամը:

Ինչպես փաստացի ճշգրտությամբ նշում է Ա. Ջաքարյանը, Օ. Մանդելշտամի անունը մեծապես կապված է Հայաստանի և հայ ժողովրդի հետ: Հայաստա-

նով՝ գրեթե ամենուր, ճամփորդելը ճակատագրական դարձավ նրա համար, քանզի իր հետագա կյանքը, հայոց լեզուն սովորելը շաղկապվեցին Հայաստանին և հայ մշակույթին:

Իր կնոջ հետ Հայաստան, նաև Ղարաբաղ կատարած այցելությունը գրողի կյանքի ամենալուսավոր, բովանդակալից, հուզիչ էջերից է, ինչի արդյունքում ծնված բանաստեղծություններն ու արձակ գործը ռուս գրականության մեջ Հայաստանի մասին գրված լավագույն նմուշներից են:

Մեծածավալ է Օ. Մանդելշտամի ուղևորությունը Հայաստան. Լենինական, Երևան, Սևան, հանրապետության գրեթե բոլոր շրջանները, Ղարաբաղ, հատկապես Շուշի: Նաև իր բազում ծանոթությունները հայ անվանի մտավորականների հետ, որոնց թվում են Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Թամանյանը, Եղիշե Չարենցը, Մամիկոն Գևորգյանը և այլք: Բացի այդ, նա մտերմացել է հայ անվանի գրական-հասարակական գործիչների հետ Բաքվում ու Թիֆլիսում: Ու այդպիսով Հայոց աշխարհը և՛ իր պատմությամբ, և՛ իր մշակույթով մեծ տեղ է գտել Օ. Մանդելշտամի կյանքում ու ստեղծագործության մեջ, մասնավորապես արձակ երկերում, բանաստեղծություններում և իր մասին գրված հուշերում:

Այս դարի ծնունդից հաշված

երեսունմեկ թվին

Վերադարձա, չէ՛ կարդա. բռնությամբ ետ բերվեցի բուրդիստական Մոսկվա: Իսկ մինչ այդ տեսա, այնուամենայնիվ, Բիբլիական սփռոցներով հարուստ

Արարատը,

Երկու հարյուր օր անցկացրի այդ

շաբաթապահ երկրում,

Որ կոչի Հայաստան:

(Թարգ.՝ Հրաչյա Բեյլերյան)

Նկատենք, որ մեզանում հիմնականում ռուսերենով անդրադարձներ են եղել Օ. Մանդելշտամի կենսագրությանը, Հայաստանին առնչվող ստեղծագործությանը, նաև թարգմանվել են նրա գործերը: Նրանց թվում են Հրաչյա Բեյլերյանը, Գեորգի Կուբատյանը, Նատալիա

Գոնչար-Խանջյանը: Ուշագրավ է այն արժանապատիվ իրադարձությունը, որ Օ. Մանդելշտամի ծննդյան 125-ամյակի առթիվ (2016 թ.) Հայաստանի պատմության թանգարանը հրատարակել է գեղեցիկ, բովանդակալից ալբոմ-կատալոգ, որում զետեղված բազում լուսանկարները մեկնաբանվել-մերկայացվել են բանաստեղծի՝ «Հայաստան» շարքից բերված քաղվածքներով: Արժե նշել, որ Օ. Մանդելշտամի Հայաստանի մասին գրված գործերից ամենաուշագրավը «Ճանապարհորդությունը Հայաստան» արձակ երկն է, որտեղ նա խորաթափանց և հուզիչ նկարագրում է Հայաստան երկիրն ու հայությանը: Այդ գործը նույնպես արժանացել է արձագանքի նաև վերջ նշված հեղինակների հոդվածներում:

Հետաքրքրական ու ճակատագրական փաստ է, որ Հայաստանից մեկնելիս Օ. Մանդելշտամը զգում-ենթագիտակցում էր՝ այլևս երբեք այդտեղ չի՝ գա, որ, ցավոք, նրան այլևս վիճակված չի՝ լինելու վերադառնալ իր այդքան սիրած երկիրը: Եվ նա դա արտահայտել է իր բանաստեղծական հետևյալ տողերում.

Էլ երբեք քեզ չեմ նայի,

Հայոց կարճատես երկինք,

Էլ չեմ սևեռվի կլոցած աչքերով

Ճամփորդի վրանին Արարատի,

Չեմ բացի այլևս երբեք

Կավագործ քերթողներիդ դարանում

Հրաշագեղ հողիդ մատյանը սնամեջ,

Որով ուսում են առել առաջին մարդիկ:

(Թարգ.՝ Հրաչյա Բեյլերյան)

...Եվ այս ամենը մենք իմացանք՝ շնորհիվ վերոհիշյալ գրքի հեղինակի: Այդպես: Սակայն մեծանուն հայասեր, հայոց լեզուն ուսումնասիրած, մեր երկրում ապրած ականավոր բանաստեղծը, այնուամենայնիվ, վերադարձավ Հայաստան: Վերադարձավ մեծ պատվով և Անուշավան Ջաքարյանի՝ բարձր թե՛ մարդկային, թե՛ գրական տաղանդի դրսևորման շնորհիվ:

Խորին երախտագիտություն գրքի հեղինակին և բարի վայելում ընթերցողին:

**ԹԱՄԱՐ ՍՏ. ՀՈՎՀՆՆՆԻՍՅԱՆ**  
Արվեստագիտության թեկնածու

## ՊՈՆՏՈՍԻ ԸՈՒՅՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայում քչերը գիտեն, որ Հայոց ցեղասպանությունից բացի ավելի քան հարյուր տարի առաջ իրականացվեց նաև Պոնտոսի հույների ցեղասպանությունը:

Հունաստանը մայիսի 19-ը պաշտոնապես ճանաչել է Պոնտոսի հույների ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Կիպրոսը նույնպես իրադարձությունները ճանաչել է որպես ցեղասպանություն: Պոնտոսի հույների ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են ԱՄՆ-ի Նյու Յորքի, Հարավային Կարոլինա, Նյու Ջերսի, Ֆլորիդա, Մասաչուսեթս, Փենսիլվանիա և Իլինոյս նահանգները:

Հույների ցեղասպանությունը կազմակերպել էին Օսմանյան կայսրության կառավարությունը և թուրքական իշխող վերնախավը: Հակահույն արյունալի բռնությունները, կոտորածներն ու ցեղասպանական մյուս գործողություններն ուղղված էին Օսմանյան կայսրության հույն ազգաբնակչության դեմ: Իրականացվեց հույների բռնի տարահանումը, որի մասն էին կազմում մահվան երթերը, աքսորները, պատիժները, ինչպես նաև հունական մշակութային, պատմական հուշարձանների ավերումը: Ակներև է, որ Օսմանյան



կայսրության կառավարող վերնախավը գործում էր նույն արյունոտ ոճով, ինչ հայերի դեպքում: Այդ ժամանակահատվածի ընթացքում զոհվեցին մի քանի հարյուր հազար հույներ: Փախստականների մեծ մասը ապաստան գտան Հունաստանում, Ռուսական կայսրությանը պատկանող Արևելյան Հայաստանի, Վրաստանի, Հարավային Կովկասի և այլ երկրամասերի տարածքներում: 1919-1922 թվականներին Փոքր Ասիայի հույների ճնշող մեծա-

մասությունը կամ ստիպված փախել էին հայրենի բնակավայրերից, կամ սպանվել էին: Օսմանյան կայսրության մյուս ազգային խմբերը և ցեղասպանության ենթարկվեցին, օրինակ՝ ասորիները: Հույների ցեղասպանության զոհերի թվաքանակը տարբեր գնահատականներով կազմում է ավելի քան 350 հազար:

Ամտանոթի պետությունները, հատկապես Անգլիան և Ֆրանսիան դատապարտել են Օսմանյան կայսրության կառա-

վարության կողմից սկսված եղեռնը՝ որպես հանցագործություն մարդկության հանդեպ: 2007 թվականին Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը բանաձև է ընդունել Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության վերաբերյալ՝ այն համարելով որպես ցեղասպանություն: Համանման բանաձևեր են ընդունել Հունաստանի, Կիպրոսի, Հայաստանի, Նիդեռլանդների, Շվեդիայի և Ավստրիայի խորհրդարանները:

Անհրաժեշտ է խստորեն դատապարտել բոլոր ցեղասպանությունները: Հասնել այն բանին, որ միջազգային տարբեր մակարդակներում այս հարցին տրվի համապատասխան լուծում. վերադարձվի այն ամենը, ինչ պատկանում է տվյալ ժողովրդին: Միայն այս դեպքում կարող ենք կանխել մարդկությանը սպառնացող հետագա բոլոր ցեղասպանությունները: Այս հարցում կարևոր դերակատարություն ունեն նաև զանգվածային լրատվամիջոցները:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**  
Տեխնիկական գիտությունների թեկնածու

# Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվեց Սևանա լճի ավազանում ոչ մետաղական հանքերի խնդիրը

Սույն թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների մատակարարության (ՏԿԵՆ) ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը, նույն ՊՈԱԿ-ի գլխավոր փորձագետ Վարդան Զարոբյանը, ՀՀ ՇՄՆ հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Եպիսկոպոսյանը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ասատուր Վարդանյանը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության պետ Վահան Գրիգորյանը: Քննարկվեց Սևանա լճի էկոհամակարգի վրա ոչ մետաղական հանքերի ազդեցության խնդիրը:

Հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը նշեց, որ Սևանի ավազանում,

հատկապես Մարտունու շրջանում, ոչ մետաղական հանքերը կարող են գումարային ազդեցություն ունենալ «Սևան» ազգային պարկի վրա, լուրջ վտանգ պարունակել լանդշաֆտի փոփոխման, գետերի վերին հոսանքներում կենսաբազմազանության վրա: «Մենք այդ հանքերի գումարային ազդեցության գնահատական չունենք: Գուցե առաջարկենք այս գործունեության ժամանակավոր կասեցում մինչև ռազմավարական ՇՄԱԳ իրականացվի», - առաջարկեց Բարդուխ Գաբրիելյանը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը նշեց, որ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրության համաձայն, Սևանա լճի ավազանում տրված է ոչ մետաղական հանքերի ընդերքօգտագործման 25 թույլտվություն, սակայն տիեզերական նկարներից երևում է, որ միայն Գեղիկի տիեզերական հանքի տարածքում առկա է 38 մետր փոքր փորվածք 2019թ. դրությամբ, իսկ 2022թ.՝ ավելի շատ: «Ամբողջությամբ լանդշաֆտը վնասված է, անմիջապես Արգիճի գետի հարևանությամբ է, 200 մ է



հեռու գետից: Ձիլ-Արտանիշ հատվածում ևս մի քանի տասնյակ բաց հանք կա», - ասաց Խաչատուր Մելիքսեթյանը:

ՀՀ ՏԿԵՆ-ի ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյանը նշեց, որ Գեղիկի տարածքում տրված է մեկ ընդերքօգտագործման, երեք ուսումնասիրության թույլտվություն:

ՀՀ ՇՄՆ-ի հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Եպիսկոպոսյանը նշեց, որ նախարարությունը տեղյակ չէ,

թե ինչքան հող է խախտվել, ինչ չափով:

Որոշվեց, որ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովը մամակով դիմի ՏԿԵՆ և ՇՄՆ, որպեսզի Սևանա լճի ավազանի համար իրականացվի ռազմավարական ՇՄԱԳ գնահատում պարզելու, թե ավազանում տնտեսական գործունեության տարբեր տեսակները գումարային ինչ ազդեցություն են ունենում Սևանա լճի վրա:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



կոչեր: Ոչինչ պակսեցալ խեղճ երաժշտապետին, յանկարծածին թատրոնապետին որ իր աշակերտները կը գրկէր արտասուագին աշուղներով եւ իր յաղթանակին մասնակից կ'ընէր զանոնք: Այս յաջողութիւնը որ կայծակնաւոր ըրաւ Վարդուկեանը, օր օրի սկսաւ աւելնալ: Նոր թատերախումբը, քիչ ատեն վերջ, գնաց երգել Բերա՝ Գաղղիական Թատրոնին մէջ ուր Պ. Մանասի ֆրանսացի դերասանները ներկայացումներ կու տային. գնաց Գատրգիւղ՝ Սիւնուար, Թաթաւլա, Չուհաճեանի օբրէթը՝ այդ թատերական եղանակին մէջ հարիւր անգամի չափ ներկայացուցաւ: Ամէն տեղ, տուններու եւ փողոցներու, սրճարաններու եւ գործատեղիներու մէջ, այս յանկարծ ժողովրդական

ղութունից, իսկ հերոսի անմիջականությամբ ու անթաքույց անկեղծությամբ է ապշեցնում առաջին հայացքից խորամանկ ու հնարամիտ Արիֆի N 15 խոստովանությունը երրորդ գործողությունից:

Տայտուն ու հյուսիք եւ տրված մյուս հերոսների երաժշտական դիմանկարները և: Նրանք չեն կորցնում իրենց բնորոշ գծերը սրընթաց զարգացող իրադարձությունների հորձանուտում: Օպերայում առանձնահատուկ տեղ են գրավում սիրահար զույգը՝ Մերիեմի և Արիֆի բանաստեղծական կերպարները: Նրանց եւ պատկանում լուսավոր, նրբագեղ քնարականությամբ շնչող էջերը: Մերիեմի կերպարը բացահայտվում է թե՛ մենակատար համարներում (N 3 և N 8 ռոմանս-

Օպերայի «հերոսներից» է նվագախումբը, որին վստահված են օպերայի ֆինալը՝ N 17 բալետային տեսարանը, Պարահանդեսը: Առկա են նվագախմբային ծավալուն համարներ՝ Պրեյլուդը, երկրորդ և երրորդ գործողությունների ինտրոդուկցիաները, տեսարաններն սկսող նվագախմբային մուտքերը: Նվագախմբի նվագամասը մեծապես նպաստում է հերոսների երաժշտական կերպարների բացահայտմանը՝ երբեմն ստանձնելով դիմաձիկ զարգացման խթանի դերը:

«Արիֆի» հետ է անմիջականորեն կապված Տ.Չուխաճյանի կյանքի հետկյալ դրվագը. «Չէր կրնար մոռնալ, որ այնքան դափնիներ խլած և մասնագետ երաժիշտներե եռանդով ծափահար-

## ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՃՅԱՆԻ «ԱՐԻՖԻ ԽՈՐԱՄՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՕՊԵՐԱՆ 150 ՏԱՐԵԿԱՆ Է

(Սկիզբը նախորդ համարում)

Չուխաճյանը հարկադրված հեռանում է Գետիկ-փաշայի թատրոնից և իրեն հավատարիմ դերասանական ուժերով շարունակում ներկայացնել «Արիֆը» Պոլսի զանազան թաղամասերում: «Բեմադրութիւնները աւելի քան համեստ են լինում, եւ, սակայն, երաժշտութիւնը մշտապէս գրաւում է հանդիսատեսին»: Չուխաճյանի և Տիգրան Գալեմճյանի ղեկավարությամբ ստեղծվում է «Օսմանյան օպերային թատերախումբը», որի հիմնական ուժերն էին «Արիֆի» պրեմիերայի գլխավոր դերակատարները՝ Շազիկը, Հովհաննես Աճեմյանը, Տրդատ Չիչեքճյանը: Հ.Վարդուկյանից հեռանում և Չուխաճյանին են միանում Խաչիկ Փափազյանը, Թազվոր Նալյանը, Գարեգին Ռշտունին և այլք:

Չուխաճյանը վերախմբագրում է «Արիֆը» 1873-ին և բեմադրում 1874-ի աշնանը: Բեմադրությունն արժանացել է բացառիկ ընդունելության, բազմիցս կրկնվել 1874-75 թատերաշրջանում, ներկայացվել շուրջ 100 անգամ: Ահավասիկ Հ.Աճեմյանի հիշողություններն այդ առիթով. «Ստուար բազմութիւն այն իրիկունը, փայլուն յաջողութիւն, ծափահարութիւններ, գոհութեան եւ ցնծութեան ճիչեր ու

դարձած նուագերգութեան ունէ մէկ մասը կ'երգէին կամ կը մըմնջէին: Խաղին գլխաւոր դերասանը անբաւ համբաւի մը տիրացաւ. նուագերգութիւններէն քաղուած եւ դաշնակի յարմարցուած երաժշտական տեսրերու ճակատը, ինչպէս նաեւ զանոնք ծախող խանութպաններու ապակափեղկին մէջ՝ իր պատկերը իբր զարդ կը տեսնուէր»:

Չուխաճյանի կոմիկական օպերաների համայնապատկերում «Արիֆն» ունի մի կարևոր առանձնահատկություն. այստեղ Չուխաճյանը, ի տարբերություն իր մյուս կոմիկական օպերաների, մեկ կերպարում է համատեղել իր օպերայի թե՛ կոմիկական, թե՛ քնարական հերոսներին: Արիֆի երաժշտական կերպարն առանձնանալու էր Չուխաճյանի կատակերգական հերոսների շարքում իր հուզական լայն դիապազոնով: Նրա բարդ բնութագրի գրավիչ գծերից են սահուն անցումները բուֆոնադից դեպի իսկական, ոչ կատակային լիրիկա: Իսկական քնարական հուզականությամբ է առանձնանում նրա երաժշտական բնութագիրը Մերիեմի հետ զուգերգերում: Մինչդեռ ուրախությամբ և հումորով է լեցուն վարպետորեն գրված Արիֆի N 4 կավատինան առաջին գործո-

ները), թե՛ նրա և Արիֆի զուգերգերում (N 5, 7, 9, 16), թե՛ նրա և երգչախմբի անսամբլներում:

Օպերայի երաժշտական կտավում Չուխաճյանը մեծ տեղ է հատկացրել ժողովրդի կերպարին. նա իրադարձությունների ակտիվ մասնակիցն է: Օպերայի խմբերգերն իրադարձություններից կտրված չեն, դրանք օրգանապես ներհյուսված են օպերայի դրամատուրգիայում: Արանք հանդես են գալիս օպերայի նշանակալի էպիզոդներում՝ կուլմինացիայում, հանգուցալուծման ժամանակ, օգնում բացահայտելու գլխավոր հերոսների երաժշտական կերպարներն ու ապրումները: Դրանք տարաբնույթ են իրենց նշանակությամբ և բազմազան՝ իրենց բնույթով: Ժողովրդի թեման տեղ է գտել Պրեյլուդում: Չուխաճյանը, խմբերգերով ներկայացնելով աշխատավոր ժողովրդի չարքաշ կյանքը, թողարկված առաջ է քաշում սոցիալական բողոքի թեման, ինչու չէ, նաև ընդվզում իշխող կարգերի դեմ, որոնք ժողովրդին դնում են ընչազուրկ վիճակի մեջ: Թեմա, որ հետագայում պիտի առավել լիարժեք բացահայտվեր լեբլեբիջիների կերպարում. ժողովուրդը միշտ արդարացի է ու իրավացի:

ված էր, արժանանալով անոնց արդարացի գնահատման: Շատ անգամ խանդավառությամբ կպատմեր յուր աշակերտաց, թե 1877-ի արվեստահանդեսը տեսնելու առթիվ Վիեննա գտնված ատեն փորձեր էր անգամ մը ցույց տալ տնօրենին յուր անդրանիկ գուսաներգությունն եղող «Արիֆին Հիլլեսի» ծայնագրյալ տեսրակը, հասկնալու համար թե այս տեսակ գործ մը որչափ ժամանակեն կարելի է ներկայացնել եվրոպական թատերաբեմերու վրա, կազմ ու պատրաստ վիճակի մեջ դնելով բոլոր դերակատար գուսանները, առ որ կպատասխանե ցուցահանդեսի տեսուչը թե հազիվ կրնա վեց ամիսեն պատրաստել. Չուհաճեան կհայտնե թե ինքը երեք ամիսեն պատրաստած և ներկայացուցած իսկ է Պոլսո թատերաբեմերու վրա. տնօրենը չկրնալով զսպել իր հիացումը, կըսե լակոնական ոճով մը՝ «Դուք հայ եք, կրնաք ընել»:

Այս չորս բառերը որքան մեծ արժեք ունեին այնպիսի մարդու մը բերնին մեջ, որ Եվրոպայի լուսաշողջող հրապարակին վրա տարիներու փորձառությունն ունեցած էր ամեն տեսակ գեղարվեստի և գիտությանց մեջ խորասուզվելով

## ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՃՅԱՆԻ ...

➤7 տակից քննադատի մը այս թանկագին գնահատությունը շատ խորհրդավորություններ գործեց հայ թոմարոգիտորին վրա, որն որ գոհ չըլլալով լոկ խոսքեն, կիսնդրե արվեստահանդեսի տեսուչեն որ գրավոր կերպով բարեհաճի վավերացնել յուր այդ պատվաբեր վկայությունը, զոր անմիջապես երկտողիվ մը կհաստատե ու ստորագրելով կուտա այդ վկայագիրն: Կրնա երևակայել մեծամունդ երաժշտական տիմ ուրախությունը ձեռք ձգած ըլլալուն համար այդ թղթին կտորը, զոր յուր ամեն փառքերեն ավելի համարելով գուրգուրանոք պահած էր մինչև կենաց վախճանը, երբեմնակի ցույց տալով իր բարեկամաց և հազվագյուտ մատուցի մը պես զետեղելով վերստին յուր հուշատետրին մեջ»:

«Արիֆի խորամանկությունը» կոմի-

կական օպերայի հաջողված նմուշ է, որը հանիրավի մոռացության է մատնվել: Մինչ օրս Հայաստանում օպերան չի բեմադրվել: Նրա երաժշտությունն անծանոթ է երաժիշտներին և երաժշտասերներին, քանի որ չեն հրատարակվել օպերայի ոչ պարտիտուրը և ոչ էլ կլավիրը:

Օպերան, հեղինակային ձեռագրերի հիման վրա, մեր խորհրդատվությամբ պիտի բեմադրանար Երևանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմիտեի պետական թատրոնում: Զուխաճյանի օպերային արվեստի մեծ երկրպագու, ՀՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Երվանդ Ղազանչյանի նախաձեռնությամբ ու բեմադրությամբ, ու «Կարինե» օպերետի 2014-ին հաջողությամբ իրականացրած բեմադրությունն արժանացել էր ՀՀ նախագահի մրցանակին:

Բեմադրության դիրիժորն էր լինելու Հարություն Արզումանյանը: Օպերայի լիբրետոյի թարգմանությունը թուրքերենից հայերեն մեր խմբագրով տարիներ առաջ իրականացրել էր վաստակաշատ մանկավարժ, բանաստեղծուհի և թարգմանչուհի Անահիտ Պողիկյան-Դարբինյանը: Թատրոնում արդեն մեկնարկել էին նախապատրաստական աշխատանքները, բայց... Տաղանդավոր ռեժիսորն անսպասելիորեն հեռացավ կյանքից 2019 թվականի հուլիսի 30-ին՝ իր հետ գերեզմանի ջեցնելով հայրենիքում «Արիֆի» բեմադրության՝ ինձ համար վերջին հույսը...

Իսկ մինչ այդ՝ 2012թ. դեկտեմբերի 12-ին, ՀՀ ԳԱԱ միստերի դաիլին՝ մեր կազմակերպած «Տիգրան Զուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգի վերջում մեր իսկ կատարմամբ Հայաս-

տանում առաջին անգամ հնչել էր «Արիֆի խորամանկությունը» օպերայից Տ. Զուխաճյանի կատարած դաշնամուրային տրանսկրիպցիաներից մեկը՝ Առաջին գործողության N 7 ֆինալի Արիֆի և Մերիենի զուգերգը:

Ուստի կարծում եմ, որ այսօր անհրաժեշտ է մոռացության փոշուց թոթափել հայկական առաջին կատակերգական արդեն 150 տարեկան «Արիֆի խորամանկությունը» օպերան և վերջապես բեմադրել մայր հայրենիքում՝ Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

## Էռուստաս Մեծելաձե

## Մուսալեռցի հայր Մովսես Շարբաթյանի ծննդյան 100-ամյակին

Զնայած նախապես զգուշացրել էի ինձ և տիկնոջս ուղեկցող երիտասարդ բարեկամիս, որ մեր ուղևորությունը պաշտոնական չէ, և դեմ եմ բոլոր տեսակի ընդունելություններին, սակայն մա տեղյակ էր պահել Հայաստանի գրողների միությանը և իմ ու իր որոշ ծանոթների: Եվ զարմանքս մեծ էր, երբ Երևանի օդանավակայանում մեզ դիմավորեցին պրոֆեսոր Լևոն Մկրտչյանը, ճանաչված բանաստեղծ Վահագն Դավթյանը, ազգագրագետ Արտաշես Նազիմյանը, մանկավարժ ու խմբավար Մովսես Շարբաթյանը և շատ ու շատ այլ բարեկամներ:

Ուղեկցողս երիտասարդ գրականագետ Ֆելիքս Բախչինյանն էր, որ 1978-ից Վիկտորիա պետական համալսարանի լիտվական գրականության ամբիո-



նում ուսումնասիրում էր հայկական գրական-մշակութային կապերը: Նա քաջատեղյակ էր իր երկրի պատմությանը, մշակույթին, և մենք որոշել էինք Ֆելիքսի հետ շրջել իր հայրենիքում, ավելի մոտիկից ծանոթանալ Հայաստանին և հայ ժողովրդին:

Մեզ տեղավորեցին «Արմենիա» հյուրանոցում, իսկ քիչ անց հրավիրեցին ռեստորան, որտեղ էլ Լևոնը մեզ ծանոթացրեց ներկայիցի հետ, և ինքն էլ դարձավ թամադա:

Նկատեցի, որ Ֆելիքսն ինչ-որ բանից դժգոհ է: Պարզվեց, որ նա ծրագրել էր մեր ծանոթությունն սկսել Էջմիածնում բնակվող Մովսես Շարբաթյանի ընտանիքից: Զնայած ուշ երեկո էր, որոշեցինք այցելել Շարբաթյաններին: Մեզ ուղեկցում էին հայր և որդի Շարբաթյանները: Հայրը՝ Մովսես Շարբաթյանը, մուսալեռցի էր: Նա զարմացավ, որ ես քաջատեղյակ եմ հայ ժողովրդի պատմությանը, կարդա-



ցել եմ Ֆրանց Վերֆելի «Մուսալեռան քառասուն օրը» գիրքը: Նրանց միհարկանի համեստ տանը ես անցկացրի իմ կյանքի ամենահարաշալի օրերից մեկը: Հայկական ճոխ սեղանը չէր, որ զարմացրեց ինձ, այլ տանտերը և նրա ընտանիքը: Իրար կողքի և իրար ներդաշնակորեն ու հրաշալի լրացնող ընտանիքի անդամները՝ մանետրոյի համեստ ու բարեհամբույր տիկինը, երաժիշտ որդին և դուստրերը, որոնցից մեծը դաշնակահար էր, կրտսերը զբաղված էր օտար լեզուների ուսումնասիրությամբ, ներկայացնում էին հայկական ընտանիքի պատկերը:

Ես շնորհակալ եմ այս հարկի տակ կազմակերպված իմ հյուրընկալության համար, քանի որ այստեղ ինձ համար շատ բան պարզվեց այս զարմանալի ժողովրդի մասին: Նաև այն, որ նախնիների միջով անցնելու և միասնականության ոգին պահելու հիմքը մաս իրար փարվելով ու ձուլվելով վերընծալով էր ձգող ընտանիքն է: Այդ օրը ես հրաշալի պատկերացրի, թե 1969 թ. հայ ժողովրդի համար ինչ է մշակակել տոնել իր համաճարներից մեկի՝ Կոմիտասի 100-

ամյակը, և ինչպես է խմբավար Մովսես Շարբաթյանն այդ ընթացքում ղեկավարել 7-9 տարեկան 300 հայ տղաներից կազմված երգչախումբը: Հիշակալի, ազգային, տաղանդի ու մանկավարժության մեջ պոտենցիալ ունեցող անհատ էր մատուցում:

Մի քանի տարի անց ինձ դարձյալ բախտ վիճակվեց հանդիպելու մանետրոյ Շարբաթյանին: Այս անգամ մա էր հյուրընկալվել Լիտվայում: Տղայի՝ Ռուբենի ղեկավարած Էջմիածնի երիտասարդական երգչախմբի հետ ինքն էլ էր ժամանել Լիտվա, համերգներ էին տվել մի քանի քաղաքներում, իսկ մեկնելուց առաջ այցելել էր մեր տուն: Անչափ հաճելի էր կրկին հանդիպել հրաշալի մարդուն, հմուտ երաժիշտին և մանկավարժին, որն իր կյանքը բոլորամղում տվել էր հայ երեխաների դաստիարակությանը:

Իսկ ընդհանրապես հայաստանյան իմ տպավորությունների մեջ անցնելի հետք են թողել ուշ գիշերով Էջմիածին քաղաքում Շարբաթյանների տանն անցկացրած հրաշալի պահերը:

Լիտվերենից թարգմանեց Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆԸ

## 10 000 տարվա պատմություն մեկ հարկի տակ.

## Լուսի՝ Փարիզի հորհրդանշական թանգարանը

Փարիզ այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկ անպայման փնտրում է Լուվրի՝ աշխարհի ամենամեծ թանգարանի հասցեն: Առաջին անգամ Լուվրի տարածքում հայտնվելիս, հազարավոր մարդկանց անվերջ ձգվող հերթը տեսնելիս նախ տագնապ է առաջանում, թե հնարավոր չէ հայտնվել թանգարանի ներսում, ապա տագնապին հաջորդում է վճռականությունը՝ ինչ «գնով» էլ լինի մտնել Լուվր: Թանգարանի տոմս կարելի է գնել 17 եվրոյից սկսած, մուտքն ազատ է մինչև 18 տարեկանների համար, ինչպես նաև արվեստի, պատմության ուսուցիչների, թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) անդամների, հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ուղեկցողների համար):

Այնուամենայնիվ, անգամ վերոնշյալ դեպքերում, ճիշտ է, թանգարան այցելելու համար նախապես օնլայն ժամանակացույց ընտրել՝ կուտակումներից խուսափելու, ժամանակին թանգարան մտնելու համար:

Աշխարհի ամենամեծ թանգարանն է սկզբանե կառուցվել է որպես ամրոց, ապա վերածվել է արքայական նստավայրի, 18-րդ դարից սկսած՝ գործում է որպես արվեստի գլուխգործոցների թանգարան: Լուվրում պահվում են տարբեր քաղաքակրթությունների ու ժամանակաշրջանի՝ անտիկ արևելյան, անտիկ եգիպտական, հունական, հռոմեական, էթրուսկյան, իսլամական արվեստի 500000 նմուշներ (ցուցադրված է 36 000-ը):

Մեկ օրում հնարավոր չէ հասցնել դիտել թանգարանի ավելի քան 400 սրահներում ցուցադրված նմուշները, ժամանակն արդյունավետ օգտագործելու համար ճիշտ է նախապես որոշել՝ որ հավաքածուն է նախընտրելի առաջինը տեսնել և անպայման օգտագործել թանգարանի քար-

տեզը՝ սրահները բաց չթողնելու, չմոլորվելու համար, թեև թանգարանի յուրաքանչյուր սրահում կան աշխատակիցներ, որ համբերատար հուշում են ինչպես մի սրահից մյուսում հայտնվել կամ որ սրահում գտնվել այս կամ այն նմուշը: 4-ից 6 ժամը համարվում է բավարար ժամանակ՝ թանգարանը, իհարկե, ոչ լիարժեք, բայց զգալի ճանաչելու, ուսումնասիրելու համար:

Լուվրը մաս աշխարհի ամենահաճախելի թանգարանն է. ամեն տարի թանգարան այցելում է արվեստի մի քանի միլիոն սիրահար, ռեկորդային է համարվում 2018 թվականը. այդ տարի թանգարան է այցելել 10 միլիոն մարդ:

Թանգարանի ամենամարդաշատ հատվածը Դենոնն է, տեղի սրահներից մեկում ցուցադրված է իտալացի գեղանկարիչ Լեոնարդո դա Վինչիի աշխարհահռչակ «Մոնա Լիզա»-ն: Այս սրահում այցելում միջինում մեկ ժամ կարող է սպասել՝ մի քանի րոպեով Ջոկոնդայի խորհրդավոր ժպիտին մի քանի մետր հեռավորությունից արժանանալու համար: Ապակյա շերտով պաշտպանված կտավը իսկում են մաս անվտանգության աշխատակիցները:

Քանդակների, դեկորատիվ արվեստի սիրահարների համար Լուվրը դարձյալ ճիշտ ընտրություն է. Միքելանջե-լոյից մինչև անհայտ հեղինակների ստեղծագործություններն այցելուներին ստիպում են մի քանի ժամ հայացքը վեր բալել՝ իսկա արժանանալու հայացքում տեղավորելու համար, որևէ մեկը բաց չթողնելու համար, այնինչ մեկ օրում դարձյալ հնարավոր չէ հասցնել տեսնել հազարավոր նմուշները:

Հայ այցելուներն անպայման մաս փնտրում են Լուվրի դեկորատիվ արվեստի թանգարանը, որտեղ ցուցադրված են մաս հայկական նմուշներ: Թանգարանի հազարավոր

փառահեղ նմուշների հետ սիրտը թրթռում է խաչքար տեսնելիս, որին աչքը այնքան տոկոր է: 1970 թվականին թանգարանում բացվել են «Հայկական արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը», 2007 թվականին՝ «Մուրբ Հայաստան» ցուցահանդեսները:

10000 տարվա պատմությունը սեփական հարկի տակ ներկայացնող թանգարանից հեռանալիս անպայման խոստանում ես վերադառնալ՝ բաց թողած սրահներում հայտնվելու, հազարավոր արժեքավոր նմուշներ տեսնելու համար:



## Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ՊԱՐԻԵԼՅԱՆ  
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,  
հեռ. (010) 56 81 83-357, 077 31 63 76  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 14.11.2022 թ.:

"ГИТТИОН" ("Hayka") razeta HAH PA